«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿ

Հարգելի՛ գործընկեր,

2021 թվականի ***ապրիլի 20-22–ը*** կանցկացվի Ուսանողական գիտական ընկերության ՝ՈՒԳԸ՞ **«Սպորտ, առողջություն, կրթություն» խորագրով գիտաժողով՝ հետևյալ ուղղություններով՝**

1.Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի սոցիալ-հասարակական, պատմամշակութային, կառավարման հիմնախնդիրները **(20.04.2021),**

2.Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները **(21.04.2021),**

3.Ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության բժշկակենսաբանական հիմնախնդիրները **(22.04.2021):**

Նյութերին ներկայացվող պահանջները

1.Վերևում՝ էջի կենտրոնում, մեծատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ ՝bold՞,

1 ինտերվալ ներքև՝ հոդվածի հեղինակի ֆակուլտետը, ամբիոնը, կուրսը, անունը, ազգանունը՝ լրիվ՝ թավ ՝bold՞,

1 ինտերվալ ներքև՝ գիտական ղեկավարի գիտական աստիճանը, կոչումը, անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ ՝bold՞,

առանձին պարբերությամբ նշվում են նյութի առանցքային բառերը և բառակապակցությունները (5-8 բառ), մեկ ինտերվալ ներքև՝ բուն տեքստը:

2.հոդվածի ծավալը՝ ***3-5 լրիվ էջ ՝ներառյալ աղյուսակներ, տրամագրեր՞:***

Տեքստի ձևաչափը՝ A4 ֆորմատի թուղթ (210x297 մմ), MS Word 2007, տառատեսակը՝ GHEA Grapalat ՝հայերեն՞, Times New Roman ՝ռուսերեն և անգլերեն՞, տառաչափը՝ 12, տեքստը՝ էջի լայնությամբ հավասարեցված, առանց տողադարձերի:

Միջտողային տարածությունը՝ 1, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ լուսանցք:

Տեքստի կառուցվածքը

- **Առանցքային բառեր:**
- **Հետազոտության արդիականություն**.

ներառում է հիմնախնդրի ուսումնասիրության կարևորությունը, վիճակը և դրա արտացոլումը գրական աղբյուրներում:

- **Հետազոտության նպատակը, խնդիրները**:
- **Հետազոտության մեթոդները և կազմակերպումը**.

նշվում են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները՝ մեկ տողով, օգտագործված սարքեր, քանակակազմ, հետազոտության կազմակերպում ՝վայրը, տևողությունը, ժամանակահատվածը՞:

- **Հետազոտության արդյունքների վերլուծություն**.

ներկայացվում են և վերլուծվում հետազոտության արդյունքում ստացված տվյալները, փաստերը, տրվում աղյուսակներ և տրամագրեր՝ խիստ անհրաժեշտության դեպքում ՝ընդհանուր՝ 2–ից ոչ ավելի՞:

- **Եզրակացություն**.

ներկայացվում են հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կատարված եզրահանգումները՝ չկրկնելով հոդվածի այլ բաժիններում տրված ձևակերպումները □կարելի է ներկայացնել նաև առաջարկություններ□:

• **Գրականություն**.

ըստ այբբենական կարգի՝ համարակալված ներկայացվում է 3–5 գրական աղբյուր: Սկզբից տրվում են հոդվածի լեզվով աղբյուրները, որից հետո՝ օտարալեզու: Հղումները տեքստում կատարվում են քառակուսի փակագծերում՝ նշելով գրականության աղբյուրի հերթական համարը, օրինակ՝ [2] կամ [1,3]:

Լավագույն աշխատանքները հրատարակվելու են «Սպորտ, առողջություն, կրթություն» ուսանողական գիտական տարեգրքում:

Նյութերը ներկայացնել մինչև մարտի 20-ը՝ *էլեկտրոնային և 1 օրինակ տպագիր տարբերակով՝ հետևյալ հասցեով՝*

Երևան 0070, Ալեք Մանուկյան 11, 2–րդ հարկ՝ Տպագրական և խմբագրական բաժին, հեռախոսներ՝ □010□ 55–33-10/1-64, 093.36.89.19 Երանուհի Սիմոնյան, Էլ. հասցե՝ Eranuhi.Simonyan@sportedu.am

Ձևակերպման օրինակ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄԱՐՏԱՌՃԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

ՄՄ ֆակուլտետ, Ծանրամարտի, բռնցքամարտի և սուսերամարտի ամբիոն, 4-րդ կուրս, Միսակ Սարգսյան,
Գիտական ղեկավար՝ մ.գ.թ., ասիստենտ Ա. Շախյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Յու.Գ., Չատինյան Ա.Ա., Կարապետյան Ի.Ք., Ֆիզիկական կուլտուրայի անհրաժեշտությունն ուսանողների տեսանկյունից, Հանրապետական 29-րդ գիտամեթոդական կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 2002, էջ 15:
2. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության հիմունքները,Դասագիրք, Երևան, Զոքեր հրատ., 1993, 212 էջ:
3. Терехина Р.Н., Уровень специальной подготовленности лидеров гимнастического помоста в первый год олимпийского цикла / Р.Н. Терехина, С.В. Борсиенко, Н.Н. Коврижных // Ученые записки университета имени П. Ф. Лесгафта. – 2017. – № 10 (152). – С. 244-248.
4. Dowling M., Edwards J. & Washington M., Understanding the Concept of Professionalisation in Sport Management Research, Sport Management Review, 2014; 17(4)p. 520–529.
5. http://media.miu.by/files/store/items/lifelong/11/11_life_long_learning_5_10.pdf